

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2012 թվականի N 333-Ն

Կ Ա Ր Գ

ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության (այսուհետ՝ մասնագիտական կրթություն) պետական կրթական չափորոշիչների (այսուհետ՝ չափորոշիչ) ձևավորման և հաստատման կարգը:

2. Մասնագիտական կրթության չափորոշիչները ձևավորվում (վերանայվում) և հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկերում ներառված մասնագիտությունների յուրաքանչյուր որակավորման համար:

3. Մասնագիտական կրթության մասնագիտությունների կամ որակավորումների ցանկում չներառված, սակայն աշխատաշուկայի կարիքներին համապատասխան նոր մասնագիտությունների և (կամ) որակավորումների համար չափորոշիչները ձևավորվում և հաստատվում են սույն կարգի համաձայն: Չափորոշիչի հաստատումից հետո այդ մասնագիտությունները կամ որակավորումները ներառվում են ցանկում:

4. Մասնագիտական կրթության չափորոշիչները ձևավորվում են Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի համապատասխան մակարդակի բնութագրիչների պահանջներին և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից սահմանված մասնագիտական կրթության չափորոշիչների բաղադրիչներին համապատասխան:

5. Մասնագիտական կրթության չափորոշիչների նախագծեր կարող են մշակվել մասնագիտական կրթության ոլորտի սոցիալական գործընկերների և բոլոր շահագրգիռ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄԸ

6. Մասնագիտական կրթության չափորոշիչների նախագծերի մշակման աշխատանքները կազմակերպում է նախարարության «Կրթության ազգային

ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԿ):

7. Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ մշակման և (կամ) վերանայման ենթակա չափորոշիչների ցանկը՝ մինչև տվյալ տարվա մարտի 1-ը, ձևավորում է նախարարությունը: Այդ նպատակով ներգրավվում են սոցիալական գործընկերները, շահագրգիռ պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները: Ցանկը հաստատելուց առաջ այն քննարկվում և հավանության է արժանանում Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդում (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԽ): Վերջնական ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով:

8. Սոցիալական գործընկերների, ինչպես նաև այլ շահագրգիռ կառույցների նախաձեռնությամբ չափորոշիչների նախագծերի մշակման, դրանց վերանայման դեպքում դրանք նախարարության յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ մշակման և (կամ) վերանայման ենթակա չափորոշիչների ցանկում չեն ներառվում:

9. Ըստ մասնագիտությունների և որակավորումների՝ մասնագիտական կրթության չափորոշիչների նախագծերը մշակում են աշխատանքային խմբերը, որոնք ձևավորվում են յուրաքանչյուր մասնագիտության որակավորման գծով 5-7 փորձագետներից:

10. Չափորոշիչի նախագիծ մշակող աշխատանքային խումբը ձևավորվում է համապատասխան ոլորտի պետական կառավարման մարմնի և սոցիալական գործընկերների ներգրավմամբ: Աշխատանքային խմբի կազմում կարող են ընդգրկվել նաև գիտական կազմակերպությունների, մասնագիտական ուսումնական հաստատությունների, շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

11. Չափորոշիչների նախագծերը մշակելու ընթացքում աշխատանքային խմբերը պարտադիր հաշվի են առնում համապատասխան ոլորտների գործատուների առաջարկությունները, աշխատաշուկայի պահանջները, սպասվող զարգացումները, տվյալ ոլորտի առաջավոր փորձը:

12. Աշխատանքային խմբերը չափորոշիչների մշակված նախագծերը ներկայացնում են ՄԿՈՒԶԱԿ:

13. Մինչև հաստատման ներկայացնելը՝ չափորոշիչների մշակված նախագծերը ՄԿՈՒԶԱԿ-ում և նախարարի կողմից հաստատված համապատասխան ոլորտային հանձնաժողովներում ենթարկվում են փորձաքննության:

14. Ոլորտային հանձնաժողովների անվանական կազմը ձևավորվում է համապատասխան ոլորտի պետական կառավարման մարմնի և սոցիալական գործընկերների կողմից նախարարություն ներկայացված թեկնածուների կազմից: Ոլորտային հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել նաև գիտական կազմակերպությունների, մասնագիտական ուսումնական հաստատությունների, շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

15. Ոլորտային հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է նվազագույնը՝ 11, առավելագույնը՝ 19 մարդ:

16. Ոլորտային հանձնաժողովները չափորոշիչների նախագծերը փորձաքննության անցկացնելուց հետո, ՄԿՈՒԶԱԿ են ներկայացնում՝ նախարարի կողմից հաստատված ձևաչափերին համապատասխան, պետական կրթական չափորոշիչների նախագծերի և պետական կրթական չափորոշիչների նախագծերի տեխնիկական փորձաքննությունների վերաբերյալ փորձագիտական եզրակացությունները:

17. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչի նախագիծ մշակող աշխատանքային խմբի և ոլորտային հանձնաժողովի ձևավորման կարգը և դրանց աշխատակարգերը հաստատում է նախարարը:

18. Խորհրդակցելով փորձաքննություն իրականացրած ոլորտային հանձնաժողովի հետ՝ փորձաքննություն չանցած չափորոշիչների նախագծերը ՄԿՈՒԶԱԿ-ը վերադարձնում է աշխատանքային խմբերի վերանայմանը կամ նոր նախագիծ մշակելու համար առաջարկում է նախարարությանը ձևավորել նոր աշխատանքային խումբ:

III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

19. Մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների դրական փորձաքննություն անցած չափորոշիչների նախագծերը 10-օրյա ժամկետում ներկայացվում են նախարարություն և հաստատվում նախարարի հրամանով: